

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

18.06.2007

ժ.11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Գևորգյան, Գ. Անանյան, Վ. Դավթյան, Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան, Ա. Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Ջ. Միրզոյան (նախագահի գլխավոր խորհրդական), Վ. Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ա. Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Դ. Մարտիրոսովա (աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Կ. Կույունջյան (աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ) և Լ. Պետրոսյան (աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

2. «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կշ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Լ. Պետրոսյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաշվետվություն Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 23.04-18.05.2007թ. Ֆրանսիայի Ժողովրդագրական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացություն, հիվանդացություն և համաճարակաբանություն» ծրագրին գործնական մասնակցության վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Կ. Կույունջյան/

3.2. Հաղորդում ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում 26.05-03.06.2007 թ. Համաշխարհային բանկում կազմակերպված՝ «Հայաստանի աղքատության գնահատում» սեմինարին մասնակցության վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան, Դ. Մարտիրոսովա, Կ. Կույունջյան/

4. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002թ. հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական

ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշմամբ հաստատված հավելված 2-ում նշված «24. Տնտեսական բաժին» բառերը փոխարինել «24. Գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժին» բառերով:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող` Լ. Պետրոսյան/

Որոշեցին`

1. Հաստատել «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները` համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հոկտեմբերի 1-ից:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաշվետվություն Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 23.04-18.05.2007թ. Ֆրանսիայի Ժողովրդագրական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտի (INED) «Մահացություն, հիվանդացություն և համաճարակաբանություն» ծրագրին գործնական մասնակցության վերաբերյալ:

/Զեկուցող` Կ. Կույումջյան/

3.2. Հաղորդում ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում 26.05-03.06.2007 թ. Համաշխարհային բանկում կազմակերպված` «Հայաստանի աղքատության գնահատում» սեմինարին մասնակցության վերաբերյալ:

/Զեկուցող` Ս. Մնացականյան, Դ. Մարտիրոսովա, Կ. Կույումջյան/

Որոշեցին`

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն

/Քվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ